

**ՀԱՄԱԽԱՌՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ԴՐԱՆՑ ԽԹԱՆՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ  
ՇՐՋԱՆԱԿԸ**

**ԴԱՎԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**Բանալի բառեր** - ներառականություն, համախառն ազգային խնայողություններ, զուտ խնայողություններ, տնային տնտեսությունների խնայողություններ, հարկում ըստ վճարունակության սկզբունքի, ներառականություն, ինստիտուցիոնալ խթաններ

**ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ**

Ինչպես տնտեսական աճն է կախված ներդրումներից, այնպես էլ ներդրումները կախված են դրանք ֆինանսավորելու երկրի կարողությունից՝ սեփական խնայողություններից կամ արտաքին աղբյուրներից: Վերջինը, սակայն, ունի սահմանափակումներ և ռիսկային է: Դրա ապացույցն այն է, որ 2008թ.- ի ֆինանսական ճգնաժամից հետո ընկած ժամանակահատվածում ՕՈԻՆ-երի ներհոսքը ՀՀ դրսևորեց խիստ նվազման միտումներ, իսկ COVID-19 համավարակի ազդեցությամբ 2020թ. անկումը կազմեց 54%<sup>1</sup>: Ավելին, առաջավոր երկրների ճգնաժամի հաղթահարման միջոցառումներում ներառվել են նոր սահմանափակումներ, իսկ առաքման համաշխարհային շղթաների արմատական վերադասավորումների արդյունքում սպասվում են օտարերկրյա ներդրումների համաշխարհային հոսքերի լանդշաֆտի էական փոփոխություններ: Միաժամանակ, տնական և կայուն տնտեսական աճ գրանցած 13 երկրների (ասիական 9 երկրի) փորձի ուսումնասիրության արդյունքում ՄԱԿ-ի աճի և զարգացման հանձնաժողովը եզրահանգել է. «Կարևոր է նկատի ունենալ, որ չի հանդիպում կայուն բարձր ներդրումային ուղու դեպք, որն ապահովված չէ ներքին բարձր մակարդակի խնայողություններով: Սա հարց է առաջացնում՝ ի՞նչն է հանգեցնում խնայողությունների:... խնայողություններն են խթանում ներդրումները, թե՛ ներդրումներն են գեներացնում սեփական խնայողությունները: Հավանաբար՝ պատճառականությունն ընթանում է երկու ուղղությամբ»<sup>2</sup>:

Ներքին ներդրումների ֆինանսավորման արտաքին աղբյուրների մեծացող անորոշությունների պայմաններում՝ կարևորվում են տնտեսա-

<sup>1</sup>World Investment Report 2021. New York, United Nations, 2021, p.251.

<sup>2</sup> Commission on Growth and Development. 2008. The Growth Report : Strategies for Sustained Growth and Inclusive Development. Washington, DC : World Bank, p.54.

կան աճի ապահովման համար անհրաժեշտ ներդրումների ֆինանսավորման ներքին աղբյուր հանդիսացող ներքին խնայողությունները: Վերջին տասնամյակում ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնների ազդեցությամբ, ՀՀ տնտեսությունում առաջացել են մի շարք բացասական միտումներ, որոնցից են տնտեսական աճի ցածր և ոչ կայուն տեմպերը, ներքին խնայողությունների մակարդակի անկումը, ինչը հանգեցրել է նաև հիմնական կապիտալի համախառն կուտակման մակարդակի խիստ անկմանը (2020թ.-ին կազմել է 2008թ.-ի մակարդակի 35.5%-ը)<sup>1</sup>: Սույն հետազոտության նպատակը ՀՀ համախառն խնայողությունների կառուցվածքի, դրանց ձևավորման միտումների ուսումնասիրությունը և օրինաչափությունների բացահայտումն է, խնայողությունների մակարդակի վրա ազդող գործոնների ազդեցության գնահատումը և դրանց ինստիտուցիոնալ խթանման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը:

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Մասնավոր խնայողությունների վարքագծի ուսումնասիրությունը երկար ժամանակ եղել է տնտեսագիտական հետազոտությունների առանցքային հիմնախնդիր<sup>2</sup>: Այս տեսակետից, մասնավոր խնայողությունների կարևոր բաղադրիչ հանդիսացող տնային տնտեսությունների խնայողությունների խթանումը, այդ գործընթացներում ներառականության ապահովումը որոշիչ ազդեցություն ունի համախառն ազգային խնայողությունների մակարդակի բարձրացման և այդ ճանապարհով ներքին ներդրումների կայուն բարձր մակարդակ ապահովելու համար:

Ակնհայտորեն, շուկայական տնտեսությունն ինքնաբերաբար և պարտադիր չի ապահովում օպտիմալ տնտեսական աճ, ինչը, ըստ Տոշի-հիրո Իհորի<sup>3</sup>, պայմանավորված է նրանով, որ սպառման, խնայողությունների և ներդրումների վերաբերյալ մասնավոր որոշումները պատշաճ հաշվի չեն առնում ապագա սերունդների շահերը: Այս առումով, կարևորվում է հարկաբյուջետային քաղաքականության դինամիկ օպտիմալացման հիմնախնդիրը, որը ներառում է բյուջեի պակասորդը, պարտքի բեռը և պետական ներդրումների արդյունավետությունը: Միաժամանակ, նա նկատում է, որ «Հանրային ֆինանսները» ուսումնասիրում է, թե մենք ինչ-

<sup>1</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք (ՀՎՏ) 2010, էջ 236-239: ՀՎՏ 2021, էջ 267-271:

<sup>2</sup> IMF. World Economic Outlook, April 2014: Recovery Strengthens, Remains Uneven Washington, DC:International Monetary Fund, 2014, p. 107.

<sup>3</sup> **Ihori, T.** Principles of Public Finance, Springer Texts in Business and Economics. Springer; 1st ed. 2017, p.4.

պես պետք է զարգացնենք տնտեսությունը, որպեսզի դա համապատասխանի շրջակա միջավայրի որակին, ինչպես նաև ապագա սերունդների շահերին: Ստորև փորձ է արվել ներկայացնել հարկաբյուջետային քաղաքականության երկու գործիքների՝ ծախսերի և եկամուտների միջոցով խնայողականության գործընթացում ապագա սերունդների շահերին համապատասխան ներառականության ապահովման մոտեցում, որը կարող է նպաստել սպառման, խնայողությունների և ներդրումների վերաբերյալ օպտիմալ մասնավոր որոշումների ընդունմանը:

Միջազգային պրակտիկայում գոյություն ունեն խնայողությունների գործընթացներում ներառականության բարձր աստիճանի ապահովման տարբեր սխեմաներ, քաղաքականություններ: ՀՀ-ում այդպիսի քաղաքականությունը հատկապես կարևորվում է ներքին ներդրումների հետ կապված խնդիրների առկայությամբ: Խնայողությունների քաղաքականությունը կարող է հիմնվել տնային տնտեսության կողմից որոշումների ընդունման տեսական մոդելների վրա, որոնք ստուգված են խնայողական վարքագծի վերաբերյալ փորձառական տվյալներով: Գերիշխող մոդելը, ինչպես արդեն նշվել է, «կենսապարբերաշրջանի» տեսությունն է, որը հաշվի է առնվել ստորև ներկայացված ներառականության ինստիտուցիոնալացման հնարավոր մոտեցումներից մեկը:

Ազգային հաշիվների համակարգում «խնայողություններ» բառերին ավելի լայն իմաստ է տրված, ինչի վերաբերյալ Լուսնդի համալսարանի պրոֆեսոր Քլոս Էքլունդն իրավացիորեն նկատել է, որ «...ազգային հաշիվների համակարգում «խնայողություններ» բառերը նշանակալի լայն է, թեպետ «խնայել», նշանակում է ուղղակի ձեռնպահ մնալ սպառումից: Նա հիմնավորված է դիտարկում այն, որ ՀԱԱ-ի հաշվեկշռում բոլոր ռեսուրսները, որոնք չեն ուղղվում սպառման, կազմում են խնայողություններ»<sup>1</sup>:

Մանչեսթրի համալսարանի հետազոտողներ Ջորջ Մավոտասը և Ռոջեր Քելին նկատել են, որ «Զարգացող երկրներում դոնորների ներդրած բազմաթիվ քաղաքականություններ...խոչընդոտել են խնայողությունների համախմբմանը. բազմաթիվ փոքր ավանդատուները, որոնք գոյություն ունեն նույնիսկ թույլ զարգացած երկրների ծայրահեղ աղքատ հատվածներում, չեն դիտարկվել որպես ներքին ռեսուրսների աղբյուրներ: Դժվարությունն այն է, որ կառավարությունների համար ավելի դյուրին է ընդունել դոնորական միջոցները, քան համախմբել սեփական բնակչության խնայողությունները, չնայած այն բանին, որ վերջինը, ընդհանուր առ-

---

<sup>1</sup> Эклунд К. Эффективная экономика – шведская модель. – М.: «Экономика», 1991, с.98.

մամբ, կարող է ապահովել ավելի շատ միջոցներ հիմնական կապիտալի կուտակումը վարկավորելու համար, քան առաջինը»<sup>1</sup>:

Տնային տնտեսությունների համար, անշուշտ, վարկը կարևոր է, սակայն այն ակտիվներ կուտակելու միայն մեկ ճանապարհն է, մյուսը խնայողություններն են: Այդ առումով, Մայքլ Բարրը և Մայքլ Շերեդանը<sup>2</sup> նկատել են. «Աղքատները պետք է խնայողություններ կատարեն ոչ միայն վարկ ստանալու և այն մարելու, այլև հիմնական գնումներ անելու, կենսապարբերաշրջանի իրադարձությունները (ամուսնություն, ծնունդ, հուղարկավորություն) պատշաճ կազմակերպելու, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում» առաջացող չնախատեսված ծախսերը հոգալու համար: Ըստ նրանց, խնայողությունները և վարկը լրացնում են միմյանց, հաճախ փոխկապված են, երկուսն էլ՝ կարևոր<sup>3</sup>:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության համար օգտագործվել են ՀՀ համախառն և զուտ ազգային խնայողությունների տվյալների ժամանակային շարքերը 1993-2020 թթ., ինչպես նաև պետական և մասնավոր խնայողությունների տվյալների ժամանակային շարքերը՝ 2000-2019 թթ. համար, որոնք ստացվել են Համաշխարհային բանկի և ՀՀ վիճակագրական պետական կոմիտեի տվյալների բազաներից: Կատարվել են միջազգային համեմատություններ: Ուսումնասիրվել են համախառն և զուտ ազգային խնայողությունները, դրանց մակարդակները և միտումները: Համախառն ազգային և զուտ խնայողությունների մակարդակի վրա գործոնների ազդեցության գնահատման համար օգտագործվել է կոռելյացիոն-վերլուծության մեթոդը:

## 1. ՀԱՄԱԽԱՌՆ ԱԶԳԱՅԻՆ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ


Համախառն ազգային խնայողությունները (ՀԱԽ) երկրի ներդրումային «առողջության» ցուցիչն են: Չնայած 1993թ. մինչև 2009թ. դրական դի-

<sup>1</sup> Mavrotas, G., Kelly, R. Saving Mobilisation and Financial Sector Development: The Nexus//Savings and Development, Vol. 25, No. 1 (2001), p. 33

<sup>2</sup> Barr, M., Sherraden, M. Institutions and Inclusion in Saving Policy//in Building assets, building wealth, creating wealth in the lo-income communities, N. Retssinas and E. Belsky, eds., Brookings Press, 2005, p.286.

<sup>3</sup> Barr, M., Sherraden, M. Institutions and Inclusion in Saving Policy//in Building assets, building wealth, creating wealth in the lo-income communities, N. Retssinas and E. Belsky, eds., Brookings Press, 2005, p.286.:

նամիկային, այդուհանդերձ, ՀԱԽ-ն այնուհետև դրսևորել է խիստ անկման միտումներ և հետագոտվող ժամանակահատվածում ՀՆԱ-ի նկատմամբ կազմել է տարեկան միջին հաշվով 12.1%: Համեմատության համար՝ աշխարհի միջինը կազմել է՝ 25.8%, միջինից բարձր եկամտով երկրներինը՝ 33.9%, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների միջինը՝ 26.1%<sup>1</sup>: ՀԱԽ-ը կարևորվում է հատկապես արտաքին ցնցումների նկատմամբ դիմադրողականության առումով: 2009թ. և 2020 թ. տնտեսական խիստ անկումները դրա ապացույցն են, երբ ՀՀ-ում արձանագրվեցին տնտեսական խիստ անկումներ. 14.1% և 7.4%: Մինչդեռ, ՀԱԽ կայուն և բարձր մակարդակ ունեցող երկրներում ճգնաժամերի ժամանակ խիստ անկումներ չեն արձանագրվել: Այսպես, օրինակ, միջինից բարձր եկամտով երկրների տնտեսական աճը 2007 թ. կազմել է 9.6%, 2008 թ.՝ 6.5%, 2009 թ.՝ 2.6%, իսկ 2010 թ.՝ 8.7%: Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի երկրների տնտեսական աճի միջին ցուցանիշը 2007թ.-ին կազմել է 7.8%, 2008 թ.՝ 4.5%, 2009 թ. անկումը կազմել է 5.7%, իսկ արդեն 2010 թ. արձանագրվել է 5.02% աճ<sup>2</sup>: ՀԱԽ-ը պետական և մասնավոր հատվածի խնայողությունների ամբողջությունն է, իսկ մասնավոր խնայողությունները՝ տնային տնտեսությունների և կորպորատիվ հատվածի խնայողությունների հանրագումարը: Գծապատկեր 1-ում ներկայացված է ՀԱԽ կառուցվածքը, որին առնչվող տվյալները:



**Գծապատկեր 1** ՀՀ համախառն ազգային խնայողությունների կառուցվածքի դինամիկան, 2000-2019թթ. (ՀՆԱ-ի նկատմամբ %) <sup>3</sup>

Գծապատկերից երևում է, որ ՀԱԽ մակարդակի բարձրացմանը նպաստել են կորպորատիվ հատվածի խնայողությունները, պակաս չափով՝ պետական խնայողությունները: ՀԱԽ-ի վրա տևական ժամանակ

<sup>1</sup> Աղբյուր՝ World Development Indicators (<https://data.worldbank.org>)

<sup>2</sup> Կազմել է հեղինակը: Աղբյուր՝ World Development Indicators (<https://data.worldbank.org>)

<sup>3</sup> Կազմել է հեղինակը ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազայի հիման վրա/<https://www.armstat.am/am/?nid=14>; ԱՀՀ 1993-ում կորպորատիվ հատվածի խնայողությունների արտացոլված չլինելու պատճառով, 2000-2011թթ. տվյալները հաշվարկել է հեղինակը:

բացասական ազդեցություն է ունեցել տնային տնտեսությունների խնայողությունների (SSԻ) բացասական մակարդակը (ՀՆԱ-ի նկատմամբ %). SSԻ մակարդակը դրական է եղել 2005-2008 թթ., համապատասխանաբար՝ 1.8%, 6.2%, 3.3% և 5.1%: Տնօրինվող եկամուտների նկատմամբ տնային տնտեսությունների ծախսերի գերազանցումը (2020թ.՝ 40%) ՀՀ-ում տևական բնույթ է կրում, իսկ նրանց վարքագիծը տարբերվում է ՏՀԶԿ երկրների վարքագծից. ճգնաժամերի ժամանակ SSԻ մակարդակը բարձրանում է: Օրինակ, COVID-19 համավարակի ընթացքում ՏՀԶԿ գրեթե բոլոր երկրներում խնայողությունների մակարդակները (համախառն ազգային եկամտի նկատմամբ) բարձրացել էին, մինչդեռ ՀՀ-ում 2019 թ. այն էլ ավելի նվազել, կազմելով -23.3 %<sup>1</sup>(ՀԱԵ-ի նկատմամբ):

Ձ. Քեյնսը մարդկանց խնայողական վարքագծի առնչությամբ նկատել է. «Որպես խնայողության միջոց փողը պահպանելու մեր ցանկությունը, մեր սեփական հաշվարկների և ապագայի վերաբերյալ մեր անվստահության աստիճանի բարոմետրն է»<sup>2</sup>: Մինչդեռ, ՀՀ-ում, հակառակը, 2019 թ., 2018 թ. համեմատ, խնայողությունների մակարդակը նվազել է գրեթե երկու անգամ:

*Մասնավոր կորպորատիվ խնայողություններ (ՄԿԻ):* 2019 թ. կորպորատիվ խնայողությունները (ոչ ֆինանսական և ֆինանսական կազմակերպությունների) կազմել են 1368.4 միլիարդ դրամ կամ ՀՆԱ-ի 27.4%-ը: Աղյուսակ 1-ում ներկայացված են մասնավոր կորպորատիվ հատվածի խնայողությունները և ներդրումները, խնայողություններ-ներդրումներ ռեսուրսային ճեղքվածքը:

	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019
<b>Ոչ ֆինանսական կազմակերպությունների խնայողություններ, ՀՆԱ-ի նկատմամբ %</b>								
Ոչ ֆինանսական կազմակերպությունների	14.8	16.3	17.2	19.5	19.8	19.4	19.1	20.9
<b>համախառն կուտակում, ՀՆԱ-ի նկատմամբ %</b>								
կազմակերպությունների	15.7	13.9	14.1	13.1	10.7	10.2	16.1	10.6

<sup>1</sup> Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա// <https://www.armstat.am/am/?nid=14>;

<sup>2</sup> **Keynes, J. M.** *The General Theory of Employment, Interest and Money.* London: Macmillan 1936, p. 216.

Խնայողություններ- ներդրումներ ձեռքվածք (պակասուրդ (-)/ հավելուրդ (+))	-0.9	2.4	3.1	6.4	9.1	9.2	3.0	10.3
Ֆինանսական կազմակերպությունների խնայողություններ, ՀՆԱ-ի նկատմամբ %	2.9	2.4	2.5	2.3	3.3	5.3	5.5	6.4
Ֆինանսական կազմակերպությունների համախառն կուտակում, ՀՆԱ-ի նկատմամբ %	0.6	0.2	0.07	0.01	0.08	0.01	0.09	0.1
Խնայողություններ- ներդրումներ ձեռքվածք (պակասուրդ (-)/ հավելուրդ (+))	2.0	2.2	2.43	2.29	3.22	5.29	5.41	6.39

Աղյուսակ 1. Մասնավոր հատվածի կորպորատիվ խնայողություններ<sup>1</sup>

Ինչպես երևում է աղյուսակից, հետազոտվող ժամանակահատվածում ոչ ֆինանսական կազմակերպությունների մասով, միայն 2012 թ. է եղել ռեսուրսային ձեռքվածք, ՀՆԱ-ի 0.9%-ի չափով: Ըստ էության, կապիտալի կուտակումը հարմարեցվել է խնայողություններին, այլ ոչ տեխնոլոգիական առաջընթացի պահանջներին. ներդրումներ արվել են խնայողությունների շրջանակներում: 2013-2019 թթ. գրանցվել է խնայողություններ-ներդրումներ ռեսուրսային հավելուրդ: Մինչդեռ ներդրումների 25%-ից ավելիի դեպքում է հնարավոր ապահովել տեխնոլոգիական առաջընթացը, ինչի մասին վկայում է առաջին գլխում ներկայացված ասիական երկրների փորձը:

Թեպետ կորպորատիվ խնայողությունների դինամիկան դրական է, այդուհանդերձ, ներդրումները դրսևորել են նվազման միտում: 2019 թ. 10.6% ներդրումների մակարդակը կամ խնայողությունների կիսով չափ օգտագործելն ինքնին բացասական երևույթ է: Այս առումով, տնտեսագետ, ԱՄՆ Արդար աճի վաշինգտոնյան կենտրոնի վերլուծաբան Նիկ Բանքերը նկատել է. «Տասնամյակների ընթացքում ոչ ֆինանսական կորպորացիաները եղել են ֆինանսական համակարգի հաճախակի փոխառուները:...Ներդրումներ կատարելու կամ այլ ընկերություն ձեռք բերելու

<sup>1</sup> Կազմել է հեղինակը: Աղբյուր՝ ՀՀ վիճակագրության տվյալների բազա// [https://www.armstat.am/am/?nid=202\\_2000-2011թթ.-ների\\_տվյալները\\_հաշվարկել\\_է\\_հեղինակը](https://www.armstat.am/am/?nid=202_2000-2011թթ.-ների_տվյալները_հաշվարկել_է_հեղինակը):

համար նրանք ֆինանսական համակարգի միջոցով դիմում էին փոխառությունների տնտեսության մյուս ոլորտներում ձևավորված խնայողությունները: Մակայն 2000 թ. կորպորատիվ հատվածը փոխառությունից անցավ զուտ խնայողության: Այս խիստ փոխակերպումը, որը երբեմն անվանվում է «կորպորատիվ խնայողությունների գերհագեցում» («corporate savings glut»), ինչն ապագա տնտեսական աճի տեսանկյունից մտահոգիչ է<sup>1</sup>: ՀՀ-ում այդպիսի միտումներ սկսել են ձևավորվել 2013 թվականից: Թերևս լրացուցիչ ուսումնասիրություններ կպահանջվեն՝ պատճառահետևանքային կապերը բացահայտելու համար, քանի որ Բանքերը բերում է այնպիսի ընկերությունների օրինակներ (Google, Apple, General Motors), որոնց գործունեության մասշտաբները և միջավայրը բոլորովին այլ են:

Համախառն ազգային խնայողությունների վրա անմիջական ազդեցություն ունեն նրա կառուցվածքային տարրերը. տնային տնտեսությունների (SSİv), կորպորատիվ (ՄԿԽ) և պետական (ՊԽ) հատվածների խնայողությունները: Նախ դիտարկվել է տնային տնտեսությունների խնայողությունների (household savings HHS) փոխկապվածությունը, ինչի համար ընտրվել է զույգ գծային ռեգրեսիան: Գծապատկեր 3-ից երևում է, որ երկու փոփոխականների փոխկապվածությունը բարձր է և ուղիղ գծային.  $r_{xy} = 0.712$ : Ռեգրեսիայի գնահատված մոդելն ունի հետևյալ տեսքը<sup>2</sup>.

$$GNS = 20.77 + 0.62 HHS$$

(11.57)            (4.42)            (1)

Հետազոտվող իրավիճակում GNS-ի ընդհանուր փոփոխականության 50.65%-ը բացատրվում է մոդելում HHS գործոնով: HHS-ի 1%-ով աճը հանգեցնում է GNS-ի միջինը 0.62%-ով աճին: Այնուհետև (1) մոդելում ներառվել են մյուս երկու փոփոխականները՝ պետական (GOVS) և մասնավոր կորպորատիվ հատվածի (PS) խնայողությունները: Բացահայտվել է, որ HHS և GNS փոփոխականների միջև առկա է մուլտիկոլինոնեարության խնդիր ( $r_{xy} = 0.917$ ): Մոդելից դուրս է բերվել կորպորատիվ հատվածի խնայողությունների փոփոխականը, որից հետո ստացվել է բազմակի ռեգրեսիայի հետևյալ գնահատված մոդելը.

$$GNS = 18.65 + 1.2 GOVS + 0.78 HHS$$

(11.6)            (3.1)            (12.2)            (2)

<sup>1</sup> **Bunker, N.** The corporate savings glut and the economic possibilities of the future//January 25, 2016. <https://equitablegrowth.org/the-corporate-savings-glut-and-the-economic-possibilities-of-the-future/> January 25, 2016

<sup>2</sup> Լուծումը ստացվել է և ձևակերպվել է Уравнение регрессии սերվիսի օգնությամբ: /<https://math.semestr.ru/corel/corel.php>

Մոդելի հարաչափերը վիճակագրորեն նշանակալի են: Հետազոտվող իրավիճակում ՀԱԽ-ի 89.95% փոփոխականությունը բացատրվում է մոդելում ներառված գործոններով: HHS -ի 1%-ով աճը հանգեցնում է GNS -ի մակարդակի 0.78%-ով աճին, ՊԽ-ինը՝ 1.2%-ով աճին: Քանի որ  $\beta_1 = -0.968$ , կարելի է եզրակացնել, որ GNS-ի վրա ավելի մեծ ազդեցություն ունի HHS-ը: Ակնհայտ է, որ այս գործոններով չի կարող սահմանափակվել ՀԱԽ-ի վրա ազդող գործոնների շրջանակը, որոնցից մի քանիսը կարող են միջնորդավորված ազդել համախառն ազգային խնայողությունների վրա:


*Ձուտ ազգային խնայողությունները* (ՉԱԽ՝ NNS-Net National Savings): ՀԲ-ի տվյալների բազայում առկա են ՉԱԽ ճշգրտված մի քանի ցուցանիշներ: Ճշգրտված ՉԱԽ-ը ստացվում են ազգային հաշիվներում առկա «համախառն խնայողություն» ստանդարտ ցուցանիշի չորս ճշգրտումների միջոցով. (1) կապիտալի սպառումը հանելուց հետո ստացվում է ՉԱԽ-ը, (2) կրթության վրա պետական ընթացիկ ծախսերը գումարվում են, (3) հանվում են բնական ռեսուրսների հյուծման գնահատումները, որպեսզի արտացոլվի ակտիվների արժեքի նվազելը, կապված արդյունահանման և հյուծման հետ, (4) կատարվում են ածխածնի երկօքսիտի և պինդ մասնիկների արտանետումներից վնասների հանումներ: Այնուհետև ցուցիչը հաշվարկվում է ճշգրտված ՉԱԽ-ը հարաբերելով համախառն ազգային եկամտին (ՀԱԵ) <sup>1</sup>: Նման ճշգրտումները պայմանավորված են «ներառական աճ» եզրույթի տարածման հետ <sup>2</sup>: Ազգային հաշիվներում («տնօրինվող եկամտի հաշիվ») արտացոլված է միայն երկրի ՉԱԽ՝ համախառն խնայողության և հիմնական կապիտալի սպառման տարբերությունը: Հիմնական կապիտալի սպառումը այն կապիտալի փոխհատուցումն է, որը սպառվել է արտադրության գործընթացում: Հարկ է նշել, որ բացի բնապահպանական գործոններից, ՀԲ-ն կատարում է ճշգրտում ըստ կրթության ծախսերի: Մինչդեռ, որպես մարդկային կապիտալում ներդրումներ, նույն կերպ կարևոր են առողջապահության ծախսերը: Բացի դրանից, ՀԲ-ի մեթոդաբանությամբ հաշվի են առնվում պետական բյուջեի հաշվին կրթության համար կատարվող ծախսերը, նկատի ունենալով մասնավոր հատվածի կատարած ծախսերի վերաբերյալ տվյալների դժվար հասանելի լինելը:

Կատարվել է ՀՀ ՉԱԽ ճշգրտում՝ վերոնշյալի հաշվառմամբ, ինչով ամբողջական է դառնում դրանց ճշգրտումների շրջանակը: Վերոնշյալից

<sup>1</sup> Bolt, K., Matete, M., Clemens, M. Manual for Calculating Adjusted Net Savings. Environment Department, World Bank. Washington DC, September 2002, p.5.

<sup>2</sup> Lequiller, F. Blades D. Understanding National Accounts: Second Edition. Paris, OECD Publishing. 2014, p. 470.

կարելի է եզրակացնել, որ ճշգրտված ՁԱԽ-ն ավելի համարժեք է գնահատում տնտեսական առաջընթացը, արտացոլում է աճի ներառականությունը և, ՀՆԱ-ի ցուցանիշի համեմատ, ավելի ճշգրիտ է ցույց տալիս տնտեսությունում տեղի ունեցող ոչ միայն քանակական, այլև՝ որակական փոփոխությունները: Հետևաբար, նպատակահարմար է թվում այդ ցուցանիշով երկրի առաջընացը չափելը: Գծապատկեր 2-ում ներկայացված է ՀԱԽ-ի, ՁԱԽի (ազգային հաշիվների համակարգում արտացոլված) և ճշգրտված ՁԱԽ-ի դինամիկան: Գծապատկերից երևում է, որ ՀՀ-ում խնայողությունները, լինեն ճշգրտված, թե՛ ոչ, տևական ժամանակ ցուցադրել են ոչ կայուն միտումներ, չեն կայունացել որոշակի մակարդակում: Մեծապես դրանով կարող է բացատրվել նաև տնտեսական աճի ոչ կայուն լինելը, իսկ աճի ոչ բարձր տեմպերը՝ խնայողությունների ցածր մակարդակով:



**Գծապատկեր 2.** ՀՀ ճշգրտված զուտ ազգային խնայողությունները<sup>1</sup>

Բերված տվյալները վկայում են, որ հետազոտվող ժամանակահատվածում խնայողությունների կայուն բարձր մակարդակ է գրանցվել 2006-2008 թթ., իսկ դրական միտումները սկսվել են 2003 թվականից: 2009 թ., չնայած որոշակի անկմանը, ՀԱԽ-ի մակարդակը պահպանվել է ՀՆԱ-ի 10%-ից բարձր մակարդակում, մինչդեռ ինչպես ճշգրտված, այնպես չճշգրտված ՁԱԽ-ը խիստ անկում է ունեցել մինչև 2019 թ.: Չուտ խնայողությունների մեծության վրա ազդող կապիտալի սպառումը, հիմնական կապիտալի համախառն կուտակման գազաթնակետ հանդիսացող 2008թ.-ին կազմել է վերջինիս 26.4%-ը, մինչդեռ 2019 թ. այդ ցուցանիշը կազմել է 2008 թ. մակարդակի 72.7%-ը<sup>2</sup>: Ընդ որում, 2019 թ. հիմնական կապիտալի համախառն կուտակումը կազմել է 2008 թ. 72.9%-ը: «Մաշվող» տնտեսություն, այսպես կարող է բնութագրվել ՀՀ տնտեսության վիճակը, ինչի սինթետիկ ցուցիչը ճշգրտված ՁԱԽ մակարդակն է: 1995-2019

<sup>1</sup> Կազմել է հեղինակը: Աղբյուր՝ World Development Indicators (<https://data.worldbank.org>)

<sup>2</sup> Հայաստանի վիճակագրական տարեգիրք (ՀՎՏ) 2010, էջ 236, 239. ՀՎՏ2021, էջ 265,267:

թթ. ՀՀ ԶԱԽ միջին տարեկան մակարդակը կազմել է -2.2%: Դիտարկվել են մի քանի գործոններ, որոնք ազդել են դրանց վրա: Նախ, ուսումնասիրվել է միայն հիմնական կապիտալի սպառումով ճշգրտված ԶԱԽ-ը, այսինքն ազգային հաշիվներում արտացոլվող զուտ խնայողության (NNS) և նրա վրա ազդող գործոնները: Անկախ փոփոխականներ են դիտարկվել հիմնական կապիտալի սպառումը (DKAP) և կուտակումը (GFCF), ՀՆԱ-ն (GDP): Վերլուծության արդյունքում ստացվել է բազմակի ռեգրեսիայի գնահատված հետևյալ մոդելը.

$$NNS = 40.5 - 3.94DKAP + 0.32GFCF + 0.54GDP$$

(2.45)                      (2.53)                      (2.68)                      2.68)                      (3)

Մոդելից երևում է, որ DKAP-ի 1%-ով աճը հանգեցնում է NNS-ի 3.94%-ով աճին, GFCF-ինը՝ 0.32%-ով և GDP-ինը՝ 0.54%-ով աճին: NNS-ի ընդհանուր փոփոխականության 71.4%-ը բացատրվում է մոդելում ներառված գործոններով: Ըստ առավելագույն գործակցի ( $\beta_2=0.379$ )՝ NNS-ի վրա ավելի մեծ ազդեցություն ունի GFCF-ը:

Ներկայում կարևորվում է կայուն զարգացումը, ինչը ենթադրում է շրջակա միջավայրի վրա նվազագույն ազդեցությամբ տնտեսական աճը: Հետևաբար, կարևորվել է է առավելագույնս ճշգրտված ԶԱԽ-ը (ADNNS): Նույն կերպ, ուսումնասիրվել է այդ ցուցանիշի վրա գործոնների ազդեցությունը: Բազմակի ռեգրեսիայի գնահատված մոդելն ունի հետևյալ տեսքը<sup>1</sup>.

$$ADNNS = 52.2 - 4.57DKAP + 0.33GFCF + 0.53GDP$$

(3.03)                      (4.0)                      (2.46)                      (2.52)                      (4)

Մոդելից երևում է, որ DKAP-ի 1%-ով աճը հանգեցնում է NNS-ի 4.57%-ով աճին, GFCF-ինը՝ 0.33%-ով և GDP-ինը՝ 0.53%-ով աճին: NNS-ի ընդհանուր փոփոխականության 71.45%-ը բացատրվում է մոդելում ներառված գործոններով: Ըստ առավելագույն գործակցի ( $\beta_2=0.355$ )՝ NNS-ի վրա ավելի մեծ ազդեցություն ունի GFCF-ը:

Ռոբերտ Հարոդը նկատել է. «Թեպետ զարգացող երկրում հավելյալ խնայողությունները կարող են առաջացնել էական «անցումային» ժամանակաշրջան, սակայն գոյություն ունի դրա կարևորությունն ուժճացնելու որոշակի վտանգ: Եթե տվյալ պահին աճը ցածր է իր բնական տեմպերից՝ խնայողությունների բացակայության պատճառով, ապա դա ենթադրում է, որ առկա են կադրեր, որոնք կարող են կիրառել արտադրության բարելավված մեթոդներ, ներառյալ նրանք, որոնք առաջանում են պարզապես կապիտալի և արտադրանքի հարաբերակցության աճից:...Մեկ շնչի հաշ-

<sup>1</sup> Լուծումները ստացվել են Բազմակի ռեգրեսիայի հավասարում սերվիսի միջոցով// <https://math.semestr.ru/regress/corel.php> (տվյալները հավելված 1.4-ում)

վով բնական աճը տեղի է ունենում փորձի և գիտելիքների կուտակման և անձնակազմի կատարելագործման միջոցով»<sup>1</sup>: Հարկ է նկատել, որ տնական ժամանակ աճի բարձր տեմպեր ցուցադրած ասիական մի շարք երկրներ, բացի խնայողությունների մակարդակի բարձրացումից, նշանակալի ներդրումներ են կատարել մարդկային կապիտալում, այսինքն՝ այդ բաղադրիչի միջոցով բարձրացել է ՋԱԽ-ի մակարդակը: Աճի բուն էությունը հանգում է կրթությանը, մարդկանց թաքնված հնարավորությունները բացահայտելուն: Այսպիսով, ՀՀ ՀԱԽ-ը և ՋԱԽ-ը գտնվում են ցածր մակարդակում և դրսևորել են նվազման միտումներ: ՀԱԽ-ի նվազման հիմնական պատճառը տնային տնտեսությունների խնայողությունների, տնական ժամանակ պահպանվող, բացասական մակարդակն է: Հետևաբար, առաջնահերթ խնդիր է հանդիսանում դրանց ինստիտուցիոնալ խթանումը:

## 2.ՄԱՍՆԱՎՈՐ ԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿՈՂՄԵՐԸ

Ինստիտուցիոնալ տեսանկյունից՝ խնայողությունները և ակտիվների կուտակելը նշանակալի աստիճանով կառուցքավորված մեխանիզմների արդյունք են, որոնք ներառում են «հստակ կապեր, կանոններ, խթաններ և սուբսիդիաներ»<sup>2</sup>: Ընդ որում, միջազգային պրակտիկայում ոչ աղքատների և ավելի բարձր սահմանային հարկային դրույքաչափերով անձանց համար կիրառվող մեխանիզմները ենթադրում են բոլորովին այլ մոտեցումներ. նվազեցումներ հիփոթեքային վարկերի տոկոսներից, հարկային վճարումների հետաձգումներ՝ անհատական կենսաթոշակային հաշիվների համար և այլն<sup>3</sup>: Մինչդեռ, «ցածր և չափավոր եկամտով, փոքր խնայողություններով տնային տնտեսություններն ինստիտուտներից չեն ստանում միևնույն խթանները, որոնք կարող էին խրախուսել և սուբսիդավորել կուտակումները»<sup>4</sup>:

ՀՀ-ում եկամտային համահարթ դրույքաչափ ներմուծելը չի կարող համարվել հիմնավորված՝ խնայողությունների քաղաքականության նե-

<sup>1</sup> Harrod, R. F. The Economic Journal, Blackwell Publishing for the Royal Economic Society. Vol. 70, No. 278 (Jun., 1960), pp. 290-291

<sup>2</sup> Sherraden, M. *Assets and the poor: a new American welfare policy*. N.Y. Armonk, 1991, p. 116.

<sup>3</sup> Joulfaian, D., and D. Richardson. "Who Takes Advantage of Tax-Deferred Savings Programs? Evidence from Federal Income Tax Data." National Tax Journal, 2001, 54 (3):pp. 669-88.

<sup>4</sup> Sherraden, M. *Assets and the poor: a new American welfare policy*. N.Y. Armonk, 1991. Seidman, L. "Assets and the Tax Code." In *Assets for the Poor: Benefits and Mechanisms of Spreading Asset Ownership*, edited by T. Shapiro and E. N. Wolff, New York: Russell Sage Foundation, 2001, pp. 324-56..

բառականության տեսանկյունից: Նման մոտեցումը հակասում է նաև միջազգային պրակտիկային: ՄԱԿ-ի «Financing for Development» երրորդ միջազգային համաժողովի ընդունած «Ադիս Աբեբայի գործողությունների օրակարգ» փաստաթղթում կարևորվել է «եկամուտների վարչարարության բարելավումն արդիականացված, պրոգրեսիվ հարկային համակարգերի, բարելավված հարկային քաղաքականության և հարկերի ավելի արդյունավետ հավաքագրման միջոցով»<sup>1</sup>:

ՀԱԽ-ի մակարդակը պայմանավորող գլխավոր գործոններից են մարդկանց և բիզնեսի եկամուտները, հետևաբար դրանց հարկումը խիստ որոշիչ է ներքին խնայողությունների մակարդակի բարձրացման առումով: Նկատի ունենալով այն, որ ՀՆԽ բաղադրիչներից ՀՀ-ում նշանակալի է տնային տնտեսությունների խնայողությունների դերը, ինչպես նաև բնակչության ընդհանուր ցածր կենսամակարդակը, նպատակահարմար է թվում ըստ վճարունակության սկզբունքի հարկման կիրառումը: Ըստ վճարունակության հարկումը (Ability-to-Pay Taxation) ենթադրում է, որ ավելի շատ վճարելու ունակ մարդիկ պետք է վճարեն իրենց եկամտի ավելի բարձր տոկոսադրույք: Խոսքը պրոգրեսիվ եկամտային հարկի մասին է: ՀՀ-ում մինչև 2020 թ. հունվարի մեկը գործել է եկամուտների հարկման պրոգրեսիվ մոտեցումը:

ՀՀ Կառավարության N1321-Ն որոշմամբ (5 հոկտեմբեր, 2017 թ.) սահմանված կարգով կարգավորվում են, ՀՀ հարկային օրենսգրքի 160-րդ հոդվածի համաձայն, ՀՀ ռեզիդենտ ֆինանսական կազմակերպությունից ստացված և փաստացի բնակարանի ձեռքբերմանը կամ անհատական բնակելի տան կառուցմանն ուղղված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների չափով ֆիզիկական անձանց (բացառությամբ վարձու աշխատող չհամարվող անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի) օրենքով սահմանված կարգով վճարված (այդ թվում՝ հարկային գործակալի միջոցով գանձված) եկամտային հարկը փոխհատուցելու հետ կապված հարաբերությունները<sup>2</sup>: Միաժամանակ, «ՀՀ հարկային Օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2019 թ. ՀՀ օրենքով ՀՀ հարկային օրենսգրքի 150-րդ հոդվածում կատարվեցին փոփոխություններ, որոնցով 2020 թ. սկսեց կիրառվել եկամտային հարկի համահարթ դրույքաչափ (աղյուսակ 2):

<sup>1</sup> Addis Ababa Action Agenda (AAAA) of the Third International Conference on Financing for Development (Addis Ababa Action Agenda). United Nations, New York, 2015

<sup>2</sup>«Հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով ֆիզիկական անձանց կողմից վճարված եկամտային հարկի գումարների փոխհատուցման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 5 հոկտեմբերի 2017 թվականի N 1321-Ն որոշում:

Ժամանակահատված	Եկամտային հարկի դրույքաչափը
2020 թվականի հունվարի 1-ից	23 տոկոս
2021 թվականի հունվարի 1-ից	22 տոկոս
2022 թվականի հունվարի 1-ից	21 տոկոս
2023 թվականի հունվարի 1-ից	20 տոկոս

**Աղյուսակ 2.** Եկամտային հարկի ամսական դրույքաչափերը<sup>1</sup>

ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթի ընդունման համար ներկայացված հիմնավորումներից են<sup>2</sup>. (1) ազգային տնտեսության մրցունակության և ներդրումային գրավչության բարձրացման համար հարկային բեռի վերաբաշխմանն ուղղված փոփոխությունների իրականացում, (2) ՀՀ-ում եկամտային հարկի արդյունավետ դրույքաչափը, որը կազմում է շուրջ 25.1-25.2%, բավական բարձր է, ինչը բացասական ազդեցություն է ունենում ինչպես ազգային տնտեսության մրցունակության, արտահանման ծավալների ու տնտեսական աճի ցուցանիշների բարելավման, այնպես էլ աղքատության մակարդակի կրճատման վրա. (3) եկամտային հարկի գծով բարձր հարկային բեռը հանգեցնում է եկամուտների իրական մեծությունների թերհայտարարագրման, քանի որ տնտեսապես ավելի ձեռնտու է վճարել շահութահարկ և շահաբաժնի հարկ, քան եկամտային հարկ՝ ավելի բարձր դրույքաչափերով: Նախ, ազգային տնտեսության մրցունակության մասին: Էժան աշխատուժն այլևս մրցակցային առավելության և ներդրումային գրավչության գործոն չի դիտվում: Միաժամանակ, արտահանման ծավալների ու տնտեսական աճի ցուցանիշների բարելավման գլխավոր խոչընդոտը երկրի նորարական կարողության բավական ցածր մակարդակն է, այլ ոչ՝ եկամտային հարկի դրույքաչափը: Ինչ վերաբերում է (2) կետում նշված աղքատության մակարդակի կրճատմանը և (3) կետի հիմնավոր-

<sup>1</sup>«ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2018թ. հունիսի 21-ի «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և 2017թ. դեկտեմբերի 21-ի «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-266-Ն օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-338-Ն օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք: Ընդունվել է 2019 թվականի հունիսի 25-ին:

<sup>2</sup> «ՀՀ հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի և հարակից օրենքների նախագծերի փաթեթ// <https://www.e-draft.am/projects/1475/justification>

մանր, ապա համահարթ հարկադրույթի պարագայում չի կարող լուծվել նաև աղքատության մակարդակի նվազեցման խնդիրը: Միաժամանակ, նշանակալիորեն չեն նվազել եկամուտների իրական մեծությունների թերհայտարարագրումները (կամ չի ապացուցվել դրանց գոյությունը) և չի հաստատվել շահութահարկի միջոցով մանևրելու վարկածը, ինչի վկայությունն աղյուսակ 2-ում բերված տվյալներն են:

	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2021/2019
								9
<b>Եկամտային հարկ, մլրդ դրամ</b>	311.7	332.7	341.5	356.6	440.8	411.5	426.3	-14.5
<b>Աձ. %</b>	140.9	106.7	102.6	104.4	123.6	93.3	103.6	96.7
<b>Շահութահարկ, մլրդ դրամ</b>	103.7	127.2	109.8	170.1	233.8	148.7	158.6	-75.2
<b>Աձ. %</b>	100	122.8	86.3	154	137.4	63.6	106.6	67.8

9

**Աղբյուր՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2021թ. հունվար-դեկտեմբերին, էջ 121: ՀՎՏ 2021, էջ 342:**

**Աղյուսակ 3.** Եկամտային հարկի և շահութահարկի աճի տեմպերը

Թեպետ հարկադրույթների փոփոխությունների արդյունավետությունը դժվար կլինի գնահատել 2020 թ., տնտեսության մասնակի կանգի պատճառով, այդուհանդերձ, աղյուսակ 2-ի տվյալներից չեն բխում վերոնշյալ հիմնավորումների ապացույցներ: 2020 թ. եկամտային հարկի մասով պետբյուջեի եկամուտները նվազել են 6.7 տոկոսով, իսկ 2021թ. գրանցվել է 3.6% հավելած, բայց 3.3%-ով ցածր է եղել 2019 թ. մակարդակից: Շահութահարկի գումարը 2020 թ. նախորդ տարվանից ցածր է եղել 36.4%-ով, իսկ 2021թ. անկումը 2019 թ. համեմատ կազմել է 24.8%:

Փաստորեն, եկամտային հարկի վերջին փոփոխությունը չի ապահովել դրա հիմնավորման մեջ սահմանված նպատակներին հասնելը, մասնավորապես՝ «տնտեսապես ավելի ձեռնտու չի դարձրել շահութահարկ վճարելը», իսկ եկամտային հարկի մասով բարձր վարձատրվողների հարկային բեռի թեթևացումը նվազեցրել է այդ հարկատեսակի գծով

հարկային եկամուտները: Փորձագիտական հանրությունը միանշանակ չընդունեց եկամտային հարկի դրույքաչափերի փոփոխությունները դրանցում տեսնելով որոշակի ռիսկեր, մասնավորապես «համահարթ եկամտային հարկի սահմանման դեպքում վերանում է հարկի սոցիալական գործառույթը, չի գործում հարկի վերաբաշխման գործառույթը, չեզոքանում է հարկային համակարգի ուղղահայաց արդարության տեսլականը»<sup>1</sup>: Անդրադառնալով օպտիմալ հարկմանը, Տոշիհիրո Իհորին նկատում է, որ «արդյունավետության տեսանկյունից, կարևորվում է այն, թե ինչպես նվազեցնել հարկային բեռը կամ մարդկանց բարեկեցության անկումը՝ պահանջվող հարկային եկամուտների պայմաններում»<sup>2</sup>:

Ելնելով վերոնշյալից, կարելի է եզրակացնել, որ եկամտային հարկի համահարթ դրույքաչափը վերանայելու կարիք ունի առնվազն հետևյալ պատճառով. (1) ՀՀ-ի տնտեսության առնչությամբ գործում է Բարրո-Ռիկարդոյի համարժեքության վարկածը և համախառն ազգային խնայողությունների մակարդակի վրա նշանակալի ազդող գործոն է ՏՏԽ-ն, 2) ՏՏ-ների տնօրինվող եկամուտները դրսևորել են խիստ նվազման միտում, ինչն էլ հանգեցրել է տևական ժամանակ ՀԱԽ-ի մակարդակի նվազելուն, 3) զբաղվածների 60%-ից ավելի մարդկանց եկամուտների որոշակի չափով բարձրացում, նկատի ունենալով համաշխարհային և ազգային շուկայական իրադրության վատթարացումը 4) հարկման արդարացիության սկզբունքի պահպանումը, (4) ՏՏԽ խթանում և խնայողությունների գործընթացում ներառականության ապահովում: Ըստ վճարունակության հարկման սկզբունքի եկամտային հարկադրույքի հաշվարկը ներկայացված է աղյուսակ 4.-ում:

Համարվում է, որ տարատեսակ դրույքաչափերով կառուցվածքները վերաբաշխում են եկամուտը եկամտի տարբեր մակարդակով մարդկանց միջև: Սակայն, Դ. Վայսը<sup>3</sup> գտնում է, որ նույնական մարդկանց համար դրույքաչափերի տարբեր կառուցվածքը կարող է ծառայել արդյունավետությանը:

---

<sup>1</sup> **Միքայելյան Թ.** Եկամտային հարկի մեկ միասնական դրույքաչափի կիրառման առավելությունները և հնարավոր ռիսկերը/Տնտեսական զարգացման նախաձեռնությունների կենտրոնի պատվերով իրականացված հետազոտություն, Ապրիլ 2019: <https://cedi.am/wp-content/uploads/2019/04/>

<sup>2</sup> **Ihori, T.** Principles of Public Finance, Springer Texts in Business and Economics. Springer; 1st ed. 2017, p. 208.

<sup>3</sup> **Weiss, D.** Can Capital Tax Policy Be Fair? Stimulating Savings Through Differentiated Tax Rates, 78 Cornell L. Rev. 206, 1993..

Հարկվող եկամուտ (դրամ)	Սահմանային հարկային դրույքաչափ (%) (4)/(3)	Եկամտի հավելված (դրամ) Δ(1)	Հարկի հավելված (դրամ) Δ(5)	Ընդհանուր հարկ (դրամ)	Միջին տարեկան դրույքաչափ (%) (5)/(1)
1	2	3	4	5	6
0	0	-	-	-	-
150 000	15	150 000	22 500	22 500	15
500 000	20	350 000	70 000	92 500	18.5
1 000 000	25	500 000	125 000	217 500	21.7
1 500 000	30	500 000	150 000	367 500	24.5
2 000 000	35	500 000	175 000	542 500	27.1
2 միլիոնից ավելի	30	-	-	-	-

**Աղյուսակ 4.** Ըստ վճարունակության հարկման սկզբունքի եկամտային հարկադրույքի հաշվարկ<sup>1</sup>

Աղյուսակի երկրորդ սյունակում բերված են սահմանային հարկային դրույքաչափերը, որոնք վճարվում են լրացուցիչ կամ հավելված եկամտի համար: Ըստ սահմանման, սահմանային հարկային դրույքաչափը վճարվող հարկերի հավելվածն է (սյունակ 4) բաժանած հավելված եկամտին (սյունակ 3): Երբ հարկվող եկամուտը մեծանա մինչև, օրինակ, լրացուցիչ 350 հազար դրամով (մինչև 500 հազար դրամ), ապա դրա նկատմամբ կիրառվի ավելի բարձր սահմանային դրույքաչափ (20%):

Այսպիսով, ըստ վճարունակության սկզբունքի հարկումը կապահովի խնայողական գործընթացում ավելի մեծաթիվ տնային տնտեսություններ ներառելուն, կնպաստի երկրում ընդհանուր բարեկեցության բարձրացմանը և, հետևաբար, ներքին ներդրումների ֆինանսավորման ներքին աղբյուրների ընդլայնմանը: Ակնհայտորեն, առաջարկվող մոտեցման արդյունավետությունը մեծապես պայմանավորված կլինի հատկապես միլյանց հետ սերտ առնչություններ ունեցող երկու չափումների հետ. ֆինանսական գրագիտության մակարդակ և խնայողական վարքագիծ: Խնայողական վարքագծի դրսևորման լավագույն չափանիշը ճգնաժամային իրավիճակներին արձագանքելն է:

Ուսումնասիրվել են ՀՀ-ի, զարգացած ընտրված երկրների և ԵՄ երկրների (միջին) տնային տնտեսությունների խնայողությունների (տնո-

<sup>1</sup> Աղյուսակ 4-ում ներկայացված հաշվարկի հիմքում Քեմփբել Մըքքոնելի և Սթենլի Բրյուկի և Սին Ֆլինի մոտեցումն է (տե՛ս **McConnell, C., Brue, S., Flynn, S.** Economics : principles, problems, and policies. 21 Edition. McGraw-Hill Education, 2018, p.403)

րինվող եկամտի նկատմամբ %) մակարդակները 2008 թ. ֆինանսական ճգնաժամի և COVID-19 համավարակի հարուցած ճգնաժամի տարիներին, դրանց նախորդող և դրանց հաջորդող տարիներին: ՀՀ-ի տնային տնտեսությունների խնայողական վարքագիծը տրամագծորեն տարբերվում է ԵՄ և ՏՀԶԿ երկրների տնային տնտեսությունների վարքագծից, ինչը ցայտուն արտահայտվել է ճգնաժամերի ժամանակահատվածներում: Դատելով 2019 թ. ՀՀ տնային տնտեսությունների խնայողությունների մակարդակից (-23.3% ՀԱԵ-ի նկատմամբ)<sup>1</sup>, ՀՀ-ում Ջ Քեյնսի դատողությունն առ այն, որ «փողը պահպանելու մեր ցանկությունը, մեր սեփական հաշվարկների և ապագայի վերաբերյալ մեր անվստահության աստիճանի բարոմետրն է», կարող է մեկնաբանվել ուղղակի. ՀՀ բնակիչները կատարել են հաշվարկներ, որոնք վկայում են, որ ապագայի վերաբերյալ իրենց վստահության աստիճանը բավական բարձր է:

Միջազգային պրակտիկայում գոյություն ունեն խնայողական գործընթացներում ներառականության բարձր աստիճանի ապահովման տարբեր սխեմաներ, քաղաքականություններ: Խնայողությունների քաղաքականությունը կարող է հիմնվել տնային տնտեսության կողմից որոշումների ընդունման տեսական մոդելների վրա, որոնք ստուգված են խնայողական վարքագծի վերաբերյալ փորձառական տվյալներով: Գերիշխող մոդելը, ինչպես արդեն նշվել է, «կենսապարբերաշրջանի» տեսությունն է, որը հաշվի է առնվել ստորև ներկայացված մոտեցման մեջ:

ՀՀ սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրվել է հետևյալ դրույթը. «Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է: Մարդու անօտարելի արժանապատվությունն իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմքն է»: Յաճախ եկամտով, աղքատ մարդու համար դժվար է իրեն զգալ, թեկուզև, սահմանադրությամբ ամրագրված՝ «բարձրագույն արժեք» և ունենալ արժանապատվության զգացողություն: Հետևաբար, ՀՀ սահմանադրությամբ հռչակված ուղենիշներին հասնելու քայլերից մեկը կարող է դիտվել ցածր եկամտով տնային տնտեսությունների կենսամակարդակի բարձրացումը՝ խնայողությունների գործընթացում նրանց ներառականությունն ապահովելու ճանապարհով: Այս առումով, Նոբելյան մրցանակի դափնեկիր Սեն Ամարատյայի մոտեցումները, որոնք համահունչ են ՀՀ սահմանադրության նշված դրույթներին, ուրվագծում են դրա համար անհրաժեշտ շրջանակը: Ամարատյան նշանակալի ներդրում է ունեցել զարգացման երևույթի տեսական իմաստավորման մեջ և տնտեսական հիմնախնդիրների բանավե-

<sup>1</sup> Մղբյուր՝ OECD Database: <https://data.oecd.org/hha/household-savings.htm>, ՀՀԿԿ տվյալների բազա. <https://www.armstat.am/am/?nid=202>

ճերին վերադարձրել է փիլիսոփայական և էթիկական չափումը: Նրա հանրաճանաչ «Զարգացումը որպես ազատություն» գիրքը նվիրված է մարդու կյանքի վրա սոցիալական և քաղաքական հաստատությունների ազդեցությանը: Նա նկատել է, որ «տնտեսական կարիքների սրությունն ավելի շուտ ուժեղացնում, այլ ոչ թե նվազեցնում է քաղաքական ազատությունների ակտուալությունը: Հետևյալ երեք նկատառումները նպատակ ունեն վերահաստատելու հիմնարար քաղաքական և քաղաքացիական իրավունքների բացառիկ դերը. 1) նման իրավունքների և ազատությունների անմիջական նշանակությունը անհատի հիմնական ներուժի (ներառյալ քաղաքական և հասարակական կյանքին մասնակցությունը) ձևավորման գործում. 2) դրանց գործիքային դերը, որն ուղղված է ապահովելու, որպեսզի քաղաքական գործիչները պատշաճ ուշադրություն դարձնեն արված հայտարարություններին և հանրության պահանջներին (ներառյալ տնտեսական կարիքները բավարարելու պահանջները). 3) նրանց կառուցողական դերը «կարիքների» հայեցակարգման գործում (ներառյալ «տնտեսական կարիքները» սոցիալական համատեքստում հասկանալը)»[53]: Ըստ էության, այս մասում կարևորվել է ցածր եկամտով տնային տնտեսությունների «տնտեսական կարիքներից» մեկը՝ խնայողականը, հայեցակարգելը:

ՀՀ սահմանադրության 10-րդ հոդված 2-րդ կետում ամրագրված է. «Ընդերքը և ջրային ռեսուրսները պետության բացառիկ սեփականությունն են»: Այստեղից, այդ բացառիկ սեփականությունը պետք է գործադրել մարդկանց, Ամարատյաի նշած, հիմնական ներուժի ձևավորման գործում: Ավելի որոշակի՝ ընդերքը և ջրային ռեսուրսները կոչված են ոչ միայն ներկա սերնդի, այլև ապագա սերունդների պահանջմունքները բավարարելուն, իսկ ապագա սերունդն այսօր և հետագայում ծնվող երեխաներն են: Ելնելով այս նկատառումներից, ստորև ներկայացված խնայողական սխեմայի հայեցակարգն անվանվել է «Խնայողություններ զարգացման համար», որը, ենթադրաբար, կարող է հանդիսանալ խնայողությունների գործընթացում ներառականության ապահովման, «երկար փողերի» ինստիտուտի զարգացման սխեմանից մեկը: Ըստ այդ հայեցակարգի՝ յուրաքանչյուր նոր ծնված երեխայի համար բացվում է անհատական խնայողական-ներդրումային հաշիվ, որին առաջին տարում պետությունը փոխանցում է միանվազ գումար՝ բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարներից պետական բյուջե տվյալ տարվում մուտքագրված գումարի 20%-ի չափով: Այնուհետև, երկրորդ տարվանից մինչև երեխայի 16 տարին լրանալը, նվաճ աղբյուրի տարեկան գումարի 1%-ի չափով յուրաքանչյուր տարի բաշխվում է երեխաների խնայողական-ներդրումային հաշիվներին: Յուրաքանչյուր տա-

րի, երեխաների ծնողները տվյալ տարվա միջին ամսական անվանական աշխատավարձի չափով գումար են մուտքագրում երեխայի (երեխաների) խնայողական հաշվին: Միայն դրանից հետո, ցածր եկամտով ընտանիքների երեխաների խնայողական հաշվին Կառավարությունն անհատույց սուբսիդավորում է այդ գումարի 30%-ի չափով գումար<sup>1</sup>: Եկամտային բարձր մակարդակով տնային տնտեսությունը նույն չափով գումար մուտքագրում է նշված հաշվին՝ առանց սուբսիդավորման: Ցածր եկամտով տնային տնտեսությունների պարագայում, երեխաների հաշիվների համալրումը կկատարվի ըստ հետևյալ բանաձևի.

$$L_{\text{ԽՀ}} = F^{\text{վճարված}} + F^{\text{սուբսիդիան 1\%}} + SS_{\text{ՄԱՄԱ}} + \text{ԳՄ} + \text{Տ}, \quad (5)$$

որտեղ  $L_{\text{ԽՀ}}$ -ն խնայողական, ներդրումային հաշիվ՝ միջինից ցածր եկամտով տնային տնտեսությունների համար,  $F^{\text{վճարված}}$ -ն՝ բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարներից միանվագ, նոր ծնված երեխայի խնայողական հաշվին մուտքագրվող գումարն է,  $F^{\text{սուբսիդիան 1\%}}$ -ն՝ բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարներից կատարվող տարեկան վճարներն են սկսած երկրորդ տարվանից,  $SS_{\text{ՄԱՄԱ}}$  -ն՝ միջին ամսական անվանական աշխատավարձի չափն է,  $\text{ԳՄ}$ -ն՝ Կառավարության սուբսիդավորման չափն է,  $\text{Տ}$ -ն՝ կուտակված գումարի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույքն է: Մնացած, միջին և բարձր եկամտով տնային տնտեսությունների համար հաշվարկը կկատարվի այս բանաձևով.

$$M_{\text{ԽՀ}} = F^{\text{վճարված}} + F^{\text{սուբսիդիան 1\%}} + SS_{\text{ՄԱՄԱ}} + \text{Տ} \quad (6)$$

որտեղ  $M_{\text{ԽՀ}}$ -ն խնայողական-ներդրումային հաշիվ՝ միջինից բարձր եկամտով տնային տնտեսությունների համար: Հաշվարկներ կատարելու համար, ընդունվել են հետևյալ ենթադրությունները.(1) վերջին 5 տարիների ծնունդների միջին թվաքանակը, (2) բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարների վերջին 5 տարիների միջին մեծությունը, (3) միջին ամսական անվանական աշխատավարձի վերջին 5 տարիների միջին մեծությունը, (4) խնայողական ավանդի 5% տարեկան տոկոսադրույքը,(5) 16 տարիների ընթացքում ելակետային բոլոր ցուցանիշների անփոփոխ լինելը: «Խնայողություններ զարգացման համար» խնայողական սխեմայի հաշվարկի ելակետային տվյալները ներկայացված են աղյուսակ 5-ում:

<sup>1</sup>Պետական աջակցության այս չափը կարող է համարվել օպտիմալ, եթե նկատի առնվի, որ համախառն ազգային խնայողությունների մակարդակի վրա տնային տնտեսությունների խնայողությունների մակարդակի բացասական ազդեցության չափը 2000-2019թթ.-ների ժամանակահատվածում կազմել է 34.6%:

Ենթադրություն	Չափում
Ծնվածների միջին տարեկան թիվը (2016-2020թթ. միջին), հազար մարդ (կլորացրած)	40
Բնապահպանական հարկերից և բնօգտագործման վճարներից 20%-ը (2016-2020թթ. միջին), մլրդ դր.դրամ	9.6
Միջին ամսական անվանական աշխատավարձ (2016-2020թթ. միջին) (կլորացրած), հազ. դրամ	177.0
Բնապահպանական հարկերի և բնօգտագործման վճարների 1%-ը (2016-2020թթ. միջին), մլն. դրամ	480.0
Ավանդային տոկոսադրույքը	5%
Յուրաքանչյուր նոր ծնվածին բաժին հասնող միանվագ բնօգտագործման վճար (9.6 միլիարդ. դրամ/40 000), հազ. դրամ	240.0
Յուրաքանչյուր նոր ծնվածին բաժին հասնող տարեկան հատկացումներ բնօգտագործման վճարներից (480 մլն.դրամ/40 000), հազ. դրամ	12.0
Յուրաքանչյուր նոր ծնվածին, երկրորդ տարվանից մինչև 16 տարին լրանալը, Կառավարության սուբսիդայի չափը (177*30/100), հազ. դրամ (կլորացրած), հազ. դրամ	53.0

Աղյուսակ 5. «Խնայողություններ զարգացման համար» խնայողական սխեմայի շրջանակում հաշվարկի ելակետային տվյալներ

2016-2020 թթ. ծնվածների թիվը կազմել է 193.3 հազար, միջին տարեկանը՝ 38.7 հազար: Հաշվարկները դյուրացնելու համար, ծնվածների տարեկան թիվն ընդունվել 40 հազար: Բնական պաշարների օգտագործման և շրջակա միջավայրի պահպանման համար վճարներից պետական եկամուտների ընդհանուր գումարը 2016-2020 թթ. կազմել է 240.5 միլիարդ դրամ, միջին հաշվով տարեկան՝ 48.1 միլիարդ դրամ: Դրա 20%-ը կազմում է 9.62 միլիարդ դրամ: Յուրաքանչյուր ծնված երեխայի հաշվով գումարը կկազմի 240.5 հազար դրամ:

Կառավարության սուբսիդավորմամբ տարբերակի դեպքում՝ երեխայի 16 տարին լրանալիս, նա կարող է սկսել օգտագործել կուտակված գումարը, որը կկազմի 8.4 մլն դրամ: Բայց, նկատի ունենլով այն, որ առնվազն 10 տարեկանից պարզ է դառնում, թե երեխան ինչ ունակություններ ու հակումներ ունի, նպատակահարմար է թվում 10 տարեկանից կուտակված գումարը բացառապես կրթական, զարգացման նպատակներով օգտագործելը: Ընդ որում, օժտված երեխաներին կարելի է նախատեսել լրացուցիչ սուբսիդավորում՝ սկսած 10 տարեկանից, եթե խնայված ու կուտակված միջոցները չբավականացնեն: Ցածր եկամտով տնային տնտեսությունների խնայողություններին աջակցելու համար կարևոր է գործատուների և աշխատողների միջև հարաբերությունների զարգացումը: Ն-

կատի ունենալով այն, որ կուտակային կենսաթոշակի համակարգին անցմամբ, կենսաթոշակային հիմնադրամին փոխանցումներն ինքնաբերաբար իրականացնում են գործատուները, ապա նույն սխեմայով կարող են փոխանցումներ կատարվել խնայողական հաշիվներին: Ակնհայտորեն, դա որոշակի դժվարությունների հետ է կապված (աշխատողների հոսունություն, մեծաթիվ աշխատողների հաշիվների վարում), բայց օգուտները հասարակության և գործատուների, ինչպես նաև ցածր եկամտով աշխատողների համար կարող են լինել նշանակալի: Ցածր եկամտով ընտանիքի մեկ ավանդատուի հաշվով հաշվարկները ներկայացված են աղյուսակ 6-ում:

	1 տ	2 տ	3 տ	4 տ	5 տ	6 տ	7 տ	8 տ
<b>Պետբյուջեից միանվագ հատկացում, հազ. դրամ</b>	240.0	12.0	12.0	12.0	12.0	12.0	12.0	12.0
<b>Տնային տնտեսության հատկացում, հազ. դրամ</b>	177.0	177.0	177.0	177.0	177.0	177.0	177.0	177.0
<b>Կառավարության սուբսիդավորում, հազ. դրամ</b>	53.0	53.0	53.0	53.0	53.0	53.0	53.0	53.0
<b>Տվյալ տարվա սկզբի մնացորդ</b>	-	493.5	772.3	1065.0	1372.3	1695.1	2034	2389.7
<b>Գումար, որի նկատմամբ կիրառվում է 5% տոկոսադրույք</b>	470.0	735.5	1014.	1307	1614.	1937.1	2275	2631.7
<b>Տվյալ տարվա վերջի մնացորդ, հազ. դրամ</b>	493.5	772.3	1065.	1372.3	1695.	2034	2389	2763.3
			0		1		7	
	9 տ	10 տ	11 տ	12 տ	13 տ	14 տ	15 տ	16 տ
<b>Պետբյուջեից միանվագ հատկացում, հազ. դրամ</b>	12.0	12.0	12.0	12.0	12.0	12.0	12.0	12.0
<b>Տնային տնտեսության հատկացում, հազ. դրամ</b>	177.0	177.0	177.0	177.0	177.0	177.0	177.0	177.0
<b>Կառավարության սուբսիդավորում, հազ. դրամ</b>	53.0	53.0	53.0	53.0	53.0	53.0	53.0	53.0
<b>Տվյալ տարվա սկզբի մնացորդ</b>	2763.	4508.	4987.	5491	6019.	6574.7	7157	7769.5
	3	0	5		6		5	
<b>Գումար, որի նկատմամբ կիրառվում է 5% տոկոսադրույք</b>	3005.	4750.	5229.	5733	6261.	6816.7	7399	8011.5
<b>Տվյալ տարվա վերջի մնացորդ, հազ. դրամ</b>	4508.	4987.	5491	6019.6	6574.7	7157.5	7769	8412.1
	0	5			7		5	

Աղյուսակ 6. «Խնայողություններ զարգացման համար»-ի հաշվարկ ցածր եկամտով ընտանիքի մեկ ավանդատուի հաշվով

«Խնայողություններ զարգացման համար» խնայողական սխեմայի շրջանակներում կուտակված գումարները դիտարկվում են որպես ներդ-

րումային ռեսուրսներ, որոնք ներդրվում են բացառապես ՀՀ կառավարության խոշոր ծրագրերի իրականացման համար: Նկատի ունենալով առաջարկվող սխեմայի ներառական բնույթը, ինչպես նաև, ելնելով սույն մասի սկզբում կատարված եզրահանգումներից և տնտեսական աճի բարձր ու կայուն տեմպերի ապահովման համար համախառն ազգային խնայողությունների մակարդակի էական բարձրացման անհրաժեշտությունից, նպատակահարմար է թվում «պետություն-մասնավոր հատված» մեխանիզմի զարգացման հնարավորությունների ընդլայնումը՝ կապված ցածր եկամտով տնային տնտեսությունների եկամուտների հարկման հետ: Հատկապես տնային տնտեսությունների խնայողությունների մակարդակի բարձրացման տեսանկյունից, կարևորվում է խնայողությունների քաղաքականության ներառականությունը: Ինչպես նշվել է, միջինից ցածր եկամտով տնային տնտեսությունների դեպքում նախատեսված է կառավարության սուբսիդավորում՝ տնային տնտեսությունների հատկացումներ հետ միասին: Այդպիս հատկացումների հնարավորությունը որոշ չափով կմեծանա ըստ վճարունակության հարկման սկզբունքին անցմամբ:

## **ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

Այստեղ փորձ է արվել միավորելու տարբեր գաղափարներ և մոտեցումներ, ինչի արդյունքում էլ կատարվել են եզրահանգումներ և մշակվել խնայողական գործընթացներում տնային տնտեսությունների ներառականության ապահովման ներկայացված մեթոդական մոտեցումը: ՀՀ անկախության երեք տասնամյակի փորձառությունը վկայում է, որ երկրի տնտեսական զարգացման, տեխնոլոգիական առաջընթացի և բարգավաճման տեսանկյունից՝ ՕՈՒՆ նշանակությունը գերազնահատելը հիմնավորված տնտեսական քաղաքականություն չի կարող համարվել, առավելևս, որ 2019թ. համավարակից հետո տեղի են ունենում ներդրումների համաշխարհային հոսքերի լանդշաֆտի փոփոխություններ, որոնց արդյունքում էլ ավելի կնվազի ՕՈՒՆ ներհոսքը ՀՀ նման զարգացող երկրներ: Բացի դրանից՝ աշխարհաքաղաքական վերջին զարգացումները հանգեցրել են անորոշությունների մեծացմանը: Ասիական երկրների հաջողված փորձը վկայում է, որ կայուն և տևական տնտեսական աճի համար անհրաժեշտ ներքին ներդրումների ֆինանսավորման համար որոշիչ նշանակություն են ունեցել ներքին խնայողությունները, որոնք խթանվել են պետության կողմից:

**Давид Варданыан, Валовые национальные сбережения и институциональные рамки их стимулирования** - В статье рассматриваются вопросы, связанные с уровнем, тенденциями и структурой валовых национальных сбережений РА, с использованием данных временных рядов за период 1993-2020 гг.. Выявлено, что валовые национальные сбережения Республики Армения проявили положительные тенденции до 2009 года, однако затем показали резкую тенденцию к снижению, со среднегодовым значением 12,1% к ВВП в рассматриваемый период. Чистые сбережения демонстрировали негативные тенденции, среднегодовой уровень которых за период 1995-2019 гг. составил -2,2%. Низкий уровень валовых национальных сбережений в Армении и негативные тенденции в основном были обусловлены сохраняющимся во долгое время отрицательного уровня одной из его важных составляющих – сбережений домашних хозяйств (среднегодовой уровень за 2000-2019 гг. составлял -9,4%). Учитывая то, что сбережения домохозяйств существенно коррелируют с национальными сбережениями, а уровень последних имеет решающее значение для устойчивого экономического роста, на основе результатов исследований авторитетных исследователей, разработан методический положения по стимулированию сбережений фискальными инструментами, предполагающие: а) переход на систему налогообложения по принципу платежеспособности; б) создание индивидуальных сберегательно-инвестиционных счетов для новорожденных, с накоплением на их за счет отчислений из государственных доходов от платежей за использование природных ресурсов и на охрану окружающей среды, на основе государственно-частного партнерства.

**Davit Vardanyan, Gross national savings and institutional framework for their stimulation** - The article reviews the issues related to the level, trends and structure of the RA gross national savings, using time series data for the period 1993-2020. It is revealed that the gross national savings of the Republic of Armenia showed positive trends until 2009, but then showed a sharp trend to decrease, with an average annual value of 12.1% of GDP in the period under review. Net savings showed negative trends, resulting in the average annual level of -2.2% for the period 1995-2019. The low level of gross national savings in Armenia and negative trends were mainly due to the long-term negative level of one of its important components - household savings (the average annual level for 2000-2019 was -9.4%). Taking into account the fact that household savings significantly correlate with national savings, and the level of the latter is crucial for sustainable economic growth. Based on the results of research by reputable researchers, a methodological provision has been developed to stimulate savings with fiscal

instruments, including: a) transition to a taxation system based on the principle of solvency; b) creation of individual savings and investment accounts for newborns, with accumulation on their accounts at the expense of deductions from state revenues from payments for the utilization of natural resources and environment protection, on the basis of public-private partnership.

Ուղարկվել է խմբագրություն 07.04.2022թ.

Գրախոսվել է 11.04.2022թ.

Ստորագրվել է տպագրության 12.04.2022 թ.